

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2019

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Նախագահ (գլխավոր խմբագիր)՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝

Արամ Մինոնյան (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆեսոր), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Հանլետ Պետրոսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Իգիթ Ղարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.):

Председатель (главный редактор) - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:

Արամ Սիմոնյան (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, докт. ист. наук, проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, докт. ист. наук, проф.), **Артак Мовсисян** (докт. ист. наук, проф.), **Альберт Степанян** (докт. ист. наук, проф.), **Айк Аветисян** (докт. ист. наук, проф.), **Айрапет Маргарян** (докт. ист. наук, проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (докт. ист. наук, проф.), **Арман Егиазарян** (докт. ист. наук, доц.), **Игит Гарибян** (докт. ист. наук, проф.), **Генрих Абраамян** (докт. ист. наук, проф.), **Айказ Оганесян** (докт. ист. наук, проф.), **Ашот Нерсисян** (докт. ист. наук, проф.), **Ашот Айруни** (докт. ист. наук, проф.), **Валерий Тунян** (докт. ист. наук, проф.), **Ваник Виравян** (докт. ист. наук, проф.), **Рафик Наапетян** (докт. ист. наук, проф.), **Акоб Арутюнян** (докт. ист. наук, доц.), **Овик Григорян** (канд. ист. наук, доц.), **Мхитар Габриелян** (канд. ист. наук, доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. наук, доц.).

Chairman (Editor-in-Chief) - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:

Aram Simonyan (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyanyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate professor), **Edgar Hovhannisyanyan** (PhD of History, associate professor).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ИСТОРИЯ / HISTORY

Հովհաննես Խորիկյան, ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ	6
Oghannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA Hovhannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA	
Արտակ Մովսիսյան, Լիաննա Կարապետյան, ԾՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴՈՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ	14
Artak Movsisyan, Lianna Karapetyan, ON THE PROBLEMS OF THE CHRONOLOGICAL AND TERRITORIAL BORDERS OF THE KINGDOM OF SOPHENE	
Արգիշտի Կարդանյան, ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՏՈՀՄԸ ՏՐԴԱՏ ՄԵԾ ԵՎ ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ	24
Argishti Vardanyan, THE HOUSE OF MAMIKONYANS DURING THE REIGN OF TRDAT THE GREAT AND KHOSROV KOTAK	
Димидюк Дмитрий, ХОЛОДНОЕ ОРУЖИЕ В АРМЯНСКИХ ХРОНИКАХ ЭПОХИ БАГРАТИДОВ (КОНЕЦ IX- СЕРЕДИНА XI ВВ.): ТЕРМИНОЛОГИЯ ВОПРОСА	33
Dmytro Dymydyuk, BLADE WEAPONS IN THE MEDIEVAL ARMENIAN CHRONICLES OF THE BAGRATID ERA (END OF 9TH - MIDDLE OF 11TH CENTURIES): THE PROBLEM OF TERMINOLOGY	
Դավիթ Թինոյան, ԿԻԼԻԿԻՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԳԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ	48
Davit Tinoyan, THE ARMENIAN CATHOLICOSATE IN THE FIRST HALF OF THE RULE OF HETUM II	
Դիանա Հայրապետյան, ՕՍՄԱՆՅԱՆ ՖՈՒՏՎԱԿԱԹԻ ԵՎ ԱԽԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՈՒ ՀԱՅ ԱՐՀԵՍԱԿՈՐՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (XIII-XV ԴԴ.)	55
Diana Hayrapetyan, THE ROLE OF OTTOMAN FUTUWWA AND AKHI BROTHERHOOD IN THE PROCESS OF ISLAMIZATION OF ARMENIAN CRAFTSMEN (XIII-XV CC)	
Ֆելիքս Մովսիսյան, XIX Դ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՇԱՆԱԿՈՐ ՄԱՍՈՆ ՍԵՐՈՎԲԵ ԱՋՆԱԿՈՒՐԸ	63
Felix Movsisyan, FAMOUS WESTERN ARMENIAN MASON OF THE 19TH CENTURY SEROVBE AZNAVOUR	
Հովիկ Գրիգորյան, ՀՅՂ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ «ՆԺՈՒՅԳԻ ԳՈՐԾ»-Ի ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒՆՈՒՄ (1904 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1905 Թ. ՄԱՐՏ)	77
Ovik Grigoryan, ДЕЯТЕЛЬНОСТЬ ОТВЕТСТВЕННОГО УКАЗЫВАЮЩЕГО КОНСТАНТИНОПОЛЬСКОГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН НА ПЕРВОМ ЭТАПЕ ПОДГОТОВКИ «ДЕЛА КОНЬЯ» (СЕНТЯБРЬ 1904 Г. - МАРТ 1905 Г.)	

Hovik Grigoryan, THE ACTIVITY OF ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION'S (ARF-DASHNAKTSUTYUN) CONSTANTINOPLE'S INDICATIVE ORGANIZATION IN THE FIRST STAGE OF PREPARATION OF "THE CASE OF NZHUYK" (SEPTEMBER, 1904 - MARCH, 1905)	
Վանիկ Կիրաբյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՍԱՐ ԶԵՆՔ-ԶԻՆԱՍԹԵՐՔԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ 1918-1920 ԹԹ.....	95
Ваник Вирабян, ПОИСК ОРУЖИЯ ДЛЯ АРМЯНСКОЙ АРМИИ В 1918-1920 ГГ	
Vanik Virabyan, THE AMMUNITION PROCURANCE OF THE ARMENIAN ARMY (1918-1920)	
Հովիկ Գրիգորյան, Վահագն Հակոբյան, ՈՒՐՎԱԳԾԵՐ ԴԱԿԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ	108
Овик Григорян, Ваагн Акопян, ОЧЕРКИ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ДАВИДА АНАНУНА	
Hovik Grigoryan, Vahagn Hakobyan, NOTES ON DAVID ANANUN'S LIFE AND ACTIVITY	
Արամ Միմոնյան, Ալեքսանդր Սաֆարյան, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ	129
Арам Симонян, Александр Сафарян, ИЗ ИСТОРИИ ОЦЕНКИ ИДЕОЛОГИИ ТЮРКИЗМА В ТРУДАХ ИСТОРИКОВ АРМЕНИИ	
Aram Simonyan, Safaryan Alexander, ON THE IDEOLOGY OF TÜRKÇÜLÜK IN THE WORKS OF ARMENIAN HISTORIANS	
Валерий Тунян, ФЕЙК-НЬЮС ПРОПАГАНДЫ ТУРЦИИ И АЗЕРБАЙДЖАНА	137
Վալերի Թունյան, ԹՈՒՐԻՔԱՅԻ և ԱՂԲԵՉԱՆԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐԸ	
Valery Tunyan, FAKE NEWS OF TURKEY AND AZERBAIJAN PROPAGANDA	

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Հայկ Ավետիսյան, Արսեն Բոբոխյան, Արտակ Գնունի, Լևոն Մկրտչյան, Նատալյա Ավետիսյան, ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ԻՐԱԿԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ	145
Гайк Аветисян, Арсен Бобохян, Артак Гнуни, Левон Мкртчян, Наталья Аветисян, ОПЫТ СИТУАЦИОННОГО АНАЛИЗА ПОГРЕБАЛЬНОГО ОБРЯДА	
Hayk Avetisyan, Arsen Bobokhyan, Artak Gnuni, Levon Mkrтчyan, Natalya Avetisyan, THE EXPERIENCE OF SITUATIONAL ANALYSIS OF THE FUNERAL RITE	
Ռաֆիկ Նահապետյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ	158
Рафик Напетян, ОБ ЭТНОГРАФИЧЕСКОМ ИССЛЕДОВАНИИ АРМЯНСКОГО НАРОДНОГО ТРАДИЦИОННОГО ЖИЛИЩА	
Rafik Nahapetyan, ON THE ETHNOGRAPHIC STUDY OF THE ARMENIAN NATIONAL TRADITIONAL APARTMENT	

ԱՐԿԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Արթուր Հովհաննիսյան, ԽՈՐԵՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅԱՆԻ ԳՐԱՖԻԿԱՆ	166
Артур Ованнисян, ГРАФИКА ХОРЕНА ТЕР-АРУТЯНА	
Arthur Hovhannisyan, KHOREN-DER HARUTYAN'S GRAPHIC	

ՄՓՅՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Էդիկ Մինասյան, Լևոն Բատիև, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐԸ 1991-2019 ԹԹ.	174
Эдик Минасян, Левон Батиев, ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ ДОНА В ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ И КУЛЬТУРНОЙ СФЕРЕ В 1991-2019 гг.	

Edik Minasyan, Levon Batiev, RELATIONS OF THE 3rd REPUBLIC OF ARMENIA WITH ARMENIAN COMMUNITY OF DON IN SOCIAL-POLITICAL AND CULTURAL SPHERES IN 1991-2019	
Արման Եդիազարյան, Ալիկ Դարիբյան, Դիանա Դավթյան, Ինքնութիւնը և ՆԴԻՐՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ	191
Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ПРОБЛЕМЫ ИДЕНТИЧНОСТИ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ МОСКВЫ	
Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ISSUES OF IDENTITY OF MOSCOW ARMENIAN YOUTH	
Հովհաննես Ալեքսանյան, ՀԱՅԱԶԳԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	200
Ovannes Aleksanyan, АРМЯНЕ-ПАРТИЙНО-ГОСУДАРСТВЕННЫЕ ДЕЯТЕЛИ В СОВЕТСКИХ РЕСПУБЛИКАХ СРЕДНЕЙ АЗИИ	
Hovhannes Aleksanyan, ARMENIANS-PARTY-STATE LEADERS IN THE SOVIET REPUBLICS OF CENTRAL ASIA	

ԲՆԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ИЗДАНИЕ РУКОПИСЕЙ / PUBLICATION OF MANUSCRIPTS

Հայկազ Հովհաննիսյան, ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ՏԵՍԱԿԱՆԸ	206
Айказ Оганесян, ВИДЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ СТЕПАНОСА НАЗАРЯНЦА	
Haikaz Hovhannisyanyan. VISION OF STEPANOS NAZARYANTS ABOUT NATIONAL EDUCATION	

ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ
УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լևոն Հովսեփյան, ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍԵԹՈՂԱԿԱՆ ՈՐԴԵՆԻՇՆԵՐԸ	214
Levon Hovsepnyan, ОСОБЕННОСТИ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ОБУЧЕНИЮ ПОЛИТИКИ В СФЕРЕ БЕЗОПАСНОСТИ И ОБОРОНЫ ТУРЦИИ	
Levon Hovsepnyan, THE SPECIFICS AND METHODOLOGY OF TEACHING TURKEY'S SECURITY AND DEFENSE POLICY	

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ
РЕЦЕНЗИЯ / REVIEW

Փայլակ Ենգոյան, Էդիկ Մինասյան, «Երևանի պետական համալսարանն ու համալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.)», Եր., ԵՊՀ հրատ., 2019, 586 էջ + 48 ներդիր:	222
ՄԵՐ ԵՐԱՆՏԱԿՈՐՆԵՐԸ	224
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	226
INFORMATION ABOUT THE AUTHORS	228
Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ	230
NOTICE FOR THE AUTHORS	230

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ

Լևոն Հովսեփյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆՁԱՅԻՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ

Բանալի բառեր. Թուրքիա, անվտանգություն, պաշտպանություն, զինված ուժեր, դաւրնթաց, մեթոդաբանություն,ակտիվ ուսումնառություն, մշտադիտարկում:

Դասընթացի արդիականությունը

Ժամանակակից Թուրքիայի բազմակողմ, համալիր ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտական, այլև կարևոր կիրառական, ուսումնամեթոդական նշանակություն: Թուրքագիտության ոլորտում մասնագետների (թուրքագետների և ադրբեջանագետների) պատրաստումը կոչված է նաև ապահովելու Հայաստանի պետական գերատեսչությունների ու առանձին ոլորտային կառույցների կադրային ռեսուրսի կարիքները: Կարող ենք վստահորեն նշել, որ այսօր էլ ունենք բավական զարգացած թուրքագիտական դպրոց, որի ներկայացուցիչները ոչ միայն ակտիվ գործունեություն են ծավալում գիտության ու կրթության ոլորտում, այլև մասնագիտական փորձագիտական դաշտում՝ պետական տարբեր կառույցներին ու հանրությանը տրամադրելով խորհրդատվություն և հրապարակային վերլուծություններ: Արդեն տևական ժամանակ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետն իրականացնում է ՀՀ անվտանգության ոլորտի պատասխանատու պետական գերատեսչությունների համար մասնագետ-կադրերի նպատակային պատրաստում (անտարակույս է արևելագիտության, մասնավորապես՝ թուրքագիտության ռազմավարական նշանակությունը): Այս համատեքստում արդի Թուրքիայի գիտական ուսումնասիրությունը կարևորվում է նաև անվտանգային տեսանկյունից՝ հաշվի առնելով հայ-թուրքական հարաբերությունների բնույթը և Թուրքիայի կողմից ՀՀ-ի նկատմամբ դեռևս շարունակվող թշնամական քաղաքականությունը, ինչը ՀՀ-ի ու ԱՀ-ի համար ծնում է անվտանգության սպառնալիքներ ու մարտահրավերներ: Թուրքիայում ընթացող համակարգային-ինստիտուցիոնալ վերաձևումները, ավտորիտար կառավարման համակարգը և արտաքին-անվտանգային քաղաքական որոշումների կայացման մեխանիզմի կազմաքանդումն ու անհատի վրա հիմնված համակարգի ներդրումը, երկրում ազգայնական միտումների աճը, ուժային գործոնով պայմանավորված տարածաշրջանային քաղաքականությունն ու հավակնությունները, ռազմականացումը, հարևան երկրներում զինված միջամտություններն ու ուժի կիրառման սպառնալիքների աճը հիմք են տալիս ենթադրելու կոնֆլիկտային իրավիճակում Թուրքիայի անկանխատեսելի ու ազդեցիվ քայլերի հավանականության մասին, որն ուղղակի սպառնալիք կարող է լինել ՀՀ-ի համար¹:

Այսօր Թուրքիան չափազանց ինտենսիվ և մասշտաբային ռազմական արդիականացման, սպառազինման ու ռազմատեխնիկական համալրման գործընթաց է անցնում: Թուրքիայի համար ռազմավարական նշանակություն ունի սեփական ազգային ռազմաարդյունաբերության զարգացումը, ինչի ուղղությամբ իրականացվում են երկարաժամկետ, հեռանկարային ծրագրեր: 2002-2018 թթ. ընթացքում իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությունը ռազմական արդյունաբերության զարգացման ոլորտում ներդրել է մոտ 35 մլրդ դոլար²: Սեփական ռազմաարդյունաբերական արտադրանքի տարեկան արտահանման ծավալները հասնում են գրեթե 2 մլրդ դոլարի, ինչն աննախադեպ է այդ պետության համար: 2002 թ. դրությամբ մոտ 1.3 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ 66 ռազմաարդյունաբերական նա-

* Հոդվածը ներկայացվել է 27.11.2019 թ., գրախոսվել է 18.12.2019 թ., ընդունվել է տպագրության 20.12.2019 թ.:

¹ Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի արտաքին ու անվտանգային քաղաքականության փոխակերպումները. վերազնահատելով Հայաստանի անվտանգության մարտահրավերները, «Հայկական բանակ», N 4, 2018, էջ 33-49:

² Տե՛ս Savunma ve havacılık ihracatta rekora kostu, <https://www.haberturk.com/savunma-ve-havacilik-ihracatta-rekora-kostu-2249767-ekonomi>; Savunmada bagimsizlik oranı yüzde 60, <http://www.hurriyet.com.tr/ekonomi/savunmada-bagimsizlik-orani-yuzde-60-40724496>:

խագծերի թիվը 2018 թ. հասել է մոտ 600-ի՝ 45 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ: Անհրաժեշտ է փաստել, որ ԱԶԿ-ի կառավարման շրջանում թուրքական բանակը սպառազինության տեսանկյունից որակական նոր քայլ է կատարում՝ կարևոր տեղ հատկացնելով նորագույն ժամանակակից սպառազինություններով համալրմանը: Շարունակական աճ են գրանցում ռազմական ու անվտանգության ոլորտի ծախսերը՝ հանգեցնելով այդ պետության գերռազմականացման¹: Վերանայման է ենթարկվել այդ երկրի անվտանգային ու պաշտպանական քաղաքականությունը, որի կարևոր ու առանցքային ցուցիչներից են արտերկրում ռազմական բազաների տեղակայումը, ռազմական միջամտությունները հարևան երկրներում, ազգային շահերի ու պետական ինքնության կերպափոխումները և այլն: Արմատական վերածնունդ է ենթարկվել ռազմաքաղաքացիական փոխհարաբերությունների բնույթը, որը երկար ժամանակ համարվում էր Թուրքիայի հանրապետության անկյունաքարային բնորոշիչներից: ԱԶԿ-ի իշխանության շրջանում և հատկապես 2016 թ. ռազմական հեղաշրջման փորձից հետո արմատապես վերանայվում են ինչպես անվտանգության, այնպես էլ պաշտպանական համակարգի, զինված ուժերի կազմակերպակառուցվածքային, իրավանորմատիվային հիմքերն ու համակարգերը:

Ժամանակակից Թուրքիայի ուսումնասիրությունը ենթադրում է լեզվի, գրականության, մշակույթի, ժողովրդագրության, պատմության, քաղաքականության և այլ ոլորտների ու դրանց առնչվող տարբեր ասպեկտների համակարգված յուրացում: Հատկանշական է, որ ՀՀ-ում (մասնավորապես ԵՊՀ-ում և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում) վերջին երկու տասնամյակների ընթացքում զգալի աշխատանք է կատարվել հայերենով համապատասխան դասագրքերի, մենագրությունների, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկների ստեղծման ուղղությամբ, բայց, այնուհանդերձ, կարևորվում է անվտանգային խնդիրների՝ ԵՊՀ միջազգային հարաբերությունների և արևելագիտության ֆակուլտետների մագիստրատուրայի և բակալավրիատի ուսանողներին ներկայացնելուն նպատակաուղղված ուսումնական և մեթոդական գրականության ստեղծումը: Դրա շրջանակում Թուրքիայի ռազմական և անվտանգային ոլորտի վերաբերյալ մեր կողմից պատրաստվել և հրատարակության է ներկայացվել 1 մենագրություն («Թուրքիայի պաշտպանական համակարգի արդիականացումը և անվտանգության ոլորտի բարեփոխումները», Եր., ԵՊՀ հրատ., 2014) և 1 տեղեկագիրք [«Տարածաշրջանի ռազմական տեղեկագիրք», Եր., «Գիտություն», 2016 (համահեղինակությամբ)]:

Չափազանցություն չէ պնդել, որ արդի Թուրքիան համակողմանիորեն ձանաչելու, հասկանալու և պատմաքաղաքական գործընթացները, արդի զարգացումներն ըմբռնելու համար կարևոր նշանակություն ունեն նրա ռազմական համակարգի զարգացման, արդիականացման, զինվորականության դերակատարության ու այդ պետության ներքին ու արտաքին քաղաքականության մեջ ռազմական ուժի չափազանց կարևոր դերակատարության վերաբերյալ գիտելիքները: 2016 թվականից ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում դասավանդվում էր «Թուրքիայի անվտանգային և պաշտպանական քաղաքականության ասպեկտները» հատուկ դասընթացը *թուրքագիտության* մասնագիտության մագիստրատուրայում: Հետագայում թեմատիկ շրջանակն ընդլայնվելով՝ ներառեց նաև Ադրբեջանը՝ անվանափոխվելով «Թուրքիայի և Ադրբեջանի ուժային կառույցները և անվտանգային քաղաքականության ասպեկտները» դասընթացի, որը սկսեց դասավանդվել նաև *ադրբեջանագիտություն* մասնագիտության բակալավրիատում²: Հարկ է նաև նշել, որ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Տարածաշրջանային քաղաքականություն» մագիստրոսական ծրագրում դա-

¹ 2020թ. պետական բյուջեում ռազմական ու անվտանգության ոլորտին հատկացվել է 141,1 մլրդ թուրքական լիրա՝ նախորդ տարվա 102,8 մլրդ-ի փոխարեն:

St' u Bütçe en büyük pay savunma ve güvenliğe ayrıldı, <http://www.yeniyasamgazetesi1.com/butce-en-buyuk-pay-savunma-ve-guvenlige/>:

² Թուրքիայում և Ադրբեջանում Հայաստանին և Արցախին առնչվող հրապարակումների (մասնավորապես՝ թուրքերեն և ադրբեջաներեն տեղեկատվության) մշտադիտարկումը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության (վերակազմավորումից հետո՝ թուրքագիտության) ամբիոնում սկսվել է 1990-ական թթ. և ուսանողների մասնակցությունը հիշյալ գործընթացին նպաստել է նրանց թե՛ լեզվական գիտելիքների, թե՛ վերլուծական հմտությունների զարգացմանը: St' u Սաֆարյան Դ., Մելիքյան Գ., Ոսկանյան Վ., Սաֆարյան Ա., Լեռնային Դարաբաղի հիմնահարցը Թուրքիայի հասարակական-քաղաքական դիսկուրսում, Եր., 2017, էջ 13-14:

սավանդվում է «Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում» առարկան, որը ևս առնչվում է ներկայացվող դասընթացի որոշ թեմաների: Բացի այդ, դասընթացի առանձին թեմաներ պարբերաբար ներկայացվում են ռազմաքաղաքական ոլորտի դասախոսություններում և մասնագիտական վերապատրաստման հատուկ դասընթացներում:

Միջգիտակարգային և ակտիվ ուսումնառության մոտեցումները

Դասընթացն իրականացվում է մի քանի գիտակարգերի համակցությամբ, երբ առանձին թեմաներ ուսուցանվում են երկրագիտության, պատմության, քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների՝ միջգիտակարգային մոտեցմամբ: Այն հնարավորություն է տալիս դասընթացը ներկայացնել և մատուցել առավել ամբողջական՝ կիրառելի քաղաքագիտական որոշակի մեթոդներ: Օրինակ՝ զինված ուժերի կառուցվածքը, անվտանգության ու պաշտպանության ոլորտի սահմանադրավական համակարգը ներկայացվում է երկրագիտության գիտակարգային մոտեցումների շրջանակում¹: Թուրքիայում զինվորականության դերակատարությունը, զինված ուժերի կայացումն ու զարգացումը ներկայացվում են պատմական զարգացման համատեքստում, քանի որ արդի գործընթացների համակողմանի մատուցման համար անհրաժեշտ է անդրադառնալ օսմանյան ռազմական համակարգի առանձնահատկություններին, արդիականացման փուլին ու հանրապետության ստեղծման գործում զինվորականության դերակատարությանն ու ժառանգականությանը²: Անվտանգային ու պաշտպանական քաղաքականության ասպեկտները մեծամասամբ դիտարկվում են քաղաքագիտության³, իսկ ռազմական համագործակցության շրջանակները (օրինակ՝ Թուրքիա-Ադրբեջան ռազմական համագործակցությունը)՝ միջազգային հարաբերությունների շրջանակում⁴:

Դասընթացը ավանդական և ակտիվ ուսումնառության մոտեցումների համակցություն է, ինչը ենթադրում է, որ ուսանողը մի քանի դասախոսությունների ունկնդրման արդյունքում նախնական գիտելիքների ձեռքբերումից և դասընթացի խնդիրների վերաբերյալ ընդհանրական պատկերացում կազմելուց հետո անցնում է ակտիվ ուսումնառության⁵: Դասավանդման մեթոդաբանության մեջ կիրառվող ակտիվ ուսումնառության մի քանի մոտեցումներ հնարավորություն են տալիս ուսանողներին լիարժեքորեն ներգրավվել դասապրոցեսի մեջ: Դրանով կարևորվում է ավելի շատ ուսանողների հմտությունների զարգացումը, մտածողության զարգացումը՝ վերլուծության, համադրության, գնահատման սերմանման միջոցով: «Ակտիվ ունկնդրման» մեթոդի կիրառմամբ ուսանողները դասախոսության ընթացքում ներկայացված մոտեցման, գաղափարի կամ որևէ երևույթի մեկնաբանումից հետո որոշակի դադար են վերցնում, հայացք նետում իրենց կողմից արված գրառումներին և հարցեր տալիս դրանց վերաբերյալ, ինչը խթանում է ուսանողների կենտրոնացումը: Մտազրոհների կազմակերպումը հնարավորություն է տալիս ուսանողներին՝ իրենց նպաստը բերելու կատարված հարցադրման կամ առաջարկված թեմայի քննարկմանն ու պատասխաններ գտնելուն: Օրինակ՝ «Թուրքիայի և Ադրբեջանի ուժային կառույցները և անվտանգային քաղաքականության ասպեկտները» դասընթացի համար նման մոտեցման օրինակ կարող են լինել հետևյալ հարցադրումները՝ «Ինչպե՞ս է անդրադառնում թուրքական ազգային ռազմաարդյունաբերության զարգացումն այդ երկրի արտաքին քաղաքականության վրա, որո՞նք են ազգային ռազմաարդյունաբերության զարգացման ներքին պատճառականները, ի՞նչ դեր ունի Թուրքիայի ազգային մեծ ժողովը պաշտպանության ոլորտում» և այլն: «Գործընկերոջ կողմից վերանայվող (գրախոսվող) տնային առաջադրանքների հանձնարարում, երբ փոքր ծավալի վերլուծական բնույթի կամ ռեֆերատային աշխատանքը (մոնիթորինգային ամփոփագիր) կատա-

¹ Տե՛ս Հովսեփյան Լ., Ա. Հովհաննիսյան, Ս. Մինասյան, Տարածաշրջանի ռազմական տեղեկագիրք, Ե., «Գիտություն», 2016:

² Տե՛ս «История Османского государства, общества и цивилизации», под. ред. Э. Ихсаноглу, Москва, 2006:

³ Տե՛ս «Թուրքիայի անվտանգային քաղաքականության արդի միտումները և անվտանգային ինքնության փոխակերպումը», «Արևելագիտության հարցեր», N 14, 2018, էջ 179-205:

⁴ Տե՛ս Овсебян Л., Иванов В., Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии. Динамика и основные тенденции развития, Ереван, 2010:

⁵ Ակտիվ ուսումնառության մեթոդների և օրինակների մասին տե՛ս

http://www.crlt.umich.edu/sites/default/files/instructor_resources/how_can_you_incorporate_active_learning.pdf:

րելուց հետո, դասախոսին ներկայացնելու հետ մեկտեղ, ուսանողները փոխանցում են միմյանց և կատարում դիտարկումներ միմյանց աշխատանքների բովանդակության, շարադրանքի և այլնի վերաբերյալ»: Այս մոտեցման շրջանակում կարող են կիրառվել ռազմական ու անվտանգության թեմայով թուրքական մամուլի ու տեղեկատվության բաց աղբյուրների պարբերաբար կատարվող մշտադիտարկման արդյունքում պատրաստվող հակիրճ ամփոփագրերը: Օրինակ՝ կոնկրետ ժամանակային հատվածում ռազմական ոլորտի վերաբերյալ թուրքական «Anadolu», «IHA», «Haberler.com», «Sabah», «Yeni Şafak», «Milliyet», «Hürriyet» և այլ գործակալությունների ու թերթերի մշտադիտարկման արդյունքում կազմված ամփոփագրերը կարող են փոխանցվել միմյանց նկատառումներ ու դիտարկումներ անելու համար, որից հետո դրանց շուրջ կարելի է կազմակերպել քննարկում: Բաց աղբյուրներից տեղեկատվության հավաքման, մշակման համար օգտակար են նաև մի ոլորտի գերատեսչությունների և կառույցների պաշտոնական¹, ինչպես նաև ոլորտային մասնագիտացված տեղեկատվավերլուծական կայքերն ու հարթակները²:

Ղասընթացը ենթադրում է հետազոտության և ուսումնական գործընթացի կապակցում, երբ սովորողները ստացված գիտելիքներն ու տեղեկույթը ամբողջացնում են հետազոտական աշխատանքներում:

Ղասընթացի հետազոտական բաղադրիչը

Տեղեկատվական աղբյուրների մշտադիտարկում: Հաշվի առնելով համակողմանի մասնագիտական ու գիտական գրականության տղությունը դասավանդվող առարկայի վերաբերյալ լայնորեն կիրառվում է ժամանակակից թուրքական ՋԼՄ-ների ու տարաբնույթ փորձագիտական-վերլուծական էլեկտրոնային հարթակների, տեղեկատվության բաց աղբյուրների դիտարկման գործիքը, ինչը հնարավորություն է տալիս ուսանողին հայթայթել անհրաժեշտ տեղեկատվություն արդի զարգացումների ու գործընթացների վերաբերյալ: Ծրագրի շրջանակում նախատեսված է ուսանողների կողմից թուրքական ՋԼՄ-ների և վերլուծական նյութերի մշտադիտարկում, ռազմական բնագավառի թեմաների առանձնացում և մշակում: Շաբաթական կտրվածքով իրականացվող մշտադիտարկման նպատակն է վերհանել ՋՌԻ-ին, անվտանգության ոլորտին, ռազմական արդյունաբերությանը վերաբերող հրապարակումների առանձնացումը, մշակումը, դրանց հիման վրա ժամանակային կտրվածքով տեղեկատվական բնույթի տեղեկանքների կազմումը: Նման մշտադիտարկումը հնարավորություն կտա ուսանողին մշտապես հետևել այդ ոլորտում ընթացող գործընթացներին, յուրացնել համապատասխան ռազմական եզրույթաբանությունն ու պատկերացում կազմել արդի ռազմական զարգացումների վերաբերյալ: Այն նաև կնպաստի բաց աղբյուրների հետ աշխատելու հմտությունների զարգացմանը:

Թեմատիկ հետազոտական աշխատանքներ: Տեղեկատվական աղբյուրների մշտադիտարկման, ինչպես նաև մասնագիտական ակադեմիական ու վերլուծական գրականության հիման վրա ուսանողներն իրականացնում են վերլուծական-հետազոտական աշխատանք: Առանձնացվում են դասախոսության թեմայի շրջանակում արդիական հիմնախնդիրներ, որոնց վերաբերյալ կատարվում են վերլուծական բնույթի աշխատանքներ: Վերլուծական ակնարկները ենթադրում են ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանք: Աշխատանքների նախնական դիտարկումից հետո կատարվում են դրանց լսարանային ներկայացումներն ու քննարկումները, ինչը թույլ կտա ուսանողին ներգրավվել վերլուծական ու բանավեճային գործընթացում:

Հրապարակային վերլուծական աշխատանք: Հետազոտական աշխատանքի արդյունքում կատարված և ներկայացված լավագույն ակնարկները պարբերաբար հրապարակվում են հայաստանյան վերլուծական կայքերում և ՋԼՄ-ներում՝ այդպիսով ուսանողին ներգրավելով հետազոտահեն ուսումնառության մեջ՝ պարբերաբար հանդես գալով հրապարակային

¹ Տե՛ս Ջինված ուժերի գլխավոր շտաբի կայք՝ <https://www.tsk.tr/>; Ազգային անվտանգության խորհրդի կայք՝ <https://www.mgk.gov.tr/>; Պաշտպանական արդյունաբերության վարչության կայք՝ <https://www.ssb.gov.tr/>; Ներքին գործերի նախարարության կայք՝ <https://www.icisleri.gov.tr/>; Ազգային հետախուզական կազմակերպության կայք՝ <http://www.mit.gov.tr/> և այլն:

² Տե՛ս <http://www.millisavunma.com>; <https://www.savunmasanayiidergilik.com/tr>; <http://www.millisavunmaveguvenlik.org/index.php/tr/>; <http://www.milscint.com/tr/>:

վերլուծություններով: Սա նաև կատարվող աշխատանքներում առավել հետևողական լինելու լրացուցիչ խթան կհանդիսանա ուսանողի համար:

Լսարանային քննարկումների իրականացում: Լսարանում պարբերաբար կազմակերպվում են կարևոր ու արդիական թեմաների վերաբերյալ քննարկում-բանավեճեր, որտեղ ուսանողներն ի ցույց են դնում իրենց վերլուծական, քննական մտածողության հմտությունները:

Դասընթացում ներառված հիմնական թեմաները են՝ «Օսմանյան ռազմական համակարգն ու արդիականացումը», «Թուրքիայի Հանրապետության ռազմական-անվտանգության համակարգի կայացումն ու զարգացումը», «Թուրքիայի պաշտպանական համակարգը, անվտանգության մարմիններն ու հատուկ ծառայությունները, զինված ուժերի կառուցվածքը, ռազմաարդյունաբերական համալիրը, ռազմական ու անվտանգության ոլորտի արդի վերածնունդները», «Թուրքիայի արդի պաշտպանական և անվտանգային քաղաքականությունը», «Թուրքիայի ռազմական համագործակցության միտումները և շրջանակը»:

«Օսմանյան ռազմական համակարգն ու արդիականացումը» թեմայի շրջանակում ներկայացվում են ռազմական ուժերը Օսմանյան կայսրության սկզբնավորումից սկսած, դրանց կառուցվածքն ու առանձնահատկությունները, էվոլյուցիան, ինչպես նաև XVIII դ. վերջերից սկսված ռազմական արդիականացման գործընթացը¹:

«Թուրքիայի Հանրապետության ռազմական-անվտանգության համակարգի կայացումն ու զարգացումը» թեման անդրադառնում է Օսմանյան ռազմական համակարգից նորաստեղծ հանրապետության զինված ուժերի կայացման ու զարգացման, Սառը պատերազմի ընթացքում զինված ուժերի կայացման գործում ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի դերակատարության, ռազմական ենթակառուցվածքի կայացման խնդիրներին²:

«Թուրքիայի պաշտպանական համակարգը, անվտանգության մարմիններն ու հատուկ ծառայությունները» թեմայի շրջանակում ներկայացվում են Թուրքիայի ժամանակակից անվտանգության համակարգի կառուցվածքն ու գործունեության մեխանիզմը, դրա առանձին տարրերը, անվտանգության ոլորտի հիմնական հայեցակարգային փաստաթղթերը, Ազգային անվտանգության խորհուրդը, Անվտանգության գլխավոր տնօրինությունը, Ազգային հետախուզական ծառայությունն ու ներքին և արտաքին քաղաքականության մեջ դրա դերակատարությունը և այլն³:

«Զինված ուժերի կառուցվածքը» թեման ուսանողներին լիարժեք պատկերացում է տալիս թուրքական բանակի կազմակերպակառուցվածքային առանձնահատկությունների, մոբիլիզացիոն մեխանիզմների, ռազմակրթական համակարգի ու հիմնական ռազմատեխնիկական բազայի վերաբերյալ⁴:

«Ռազմաարդյունաբերական համալիրը» թեման ընդգրկում է այդ ոլորտում պետական ռազմավարության ու քաղաքականության, համալիրի գործունեության իրավակազմակերպչական համակարգի, առանցքային ընկերությունների, կարևոր ռազմատեխնիկական նախագծերի, գրանցած հաջողությունների ու թվային ցուցանիշների մասին համընդգրկում վեր-

¹ Տե՛ս «История Османского государства, общества и цивилизации», под. ред. Э. Ихсаноглу, Москва, 2006; Uyar M., Erickson E., A Military History of the Ottomans: From Osman to Ataturk, Praeger Security International, ABC-Clio, 2009, pp.31-81, 81-129:

² Տե՛ս Հովսեփյան Լ. Թուրքիայի պաշտպանական համակարգի արդիականացումը և անվտանգության ոլորտի բարեփոխումները, Եր. ԵՊՀ հրատ. 2014; Levent Kalyon, Cumhuriyet dönemi savunma politikaları, doktora tezi, Ankara üniversitesi, 2008, s. 39-45:

³ Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության արդիականացումն ու արտաքին հետախուզության վերակազմակերպումն ԱԶԿ-ի կառավարման տարիներին, «Ժամանակակից Եվրասիա», հ. 2(1), 2014, էջ 51-64; Özkan Tuncay, MIT'in Gizli Tarihi, Cumhuriyet Kitapları, Istanbul 2015; Gurcan Metin, Gisclon Megan, Turkey's Security Sector After July 15: Democratizing Security or Securitizing The State?, Turkish Policy Quarterly, Winter 2017, <http://turkishpolicy.com/article/843/turkeys-security-sector-after-july-15-democratizing-security-or-securitizing-the-state>; Yeşiltaş Murat, Seren Merve, Aslan Murat, 16 Nisan Referandumu Sonrası Türkiye'nin Ulusal Güvenlik Mimarisi: Sütünları Sağlamlaştırmak, SETA, Sayı 171, Nisan 2017:

⁴ Տե՛ս Հովսեփյան Լ., Հովհաննիսյան Ա., Մինասյան Ա., Տարածաշրջանի ռազմական տեղեկագիրք, Ե., 2016; Cumhurbaşkanlığı Hükümet Sistemi, Türkiye'nin Savunma Yapılanmasında da Yeni Bir Dönem Başlattı, <http://www.milscint.com/tr/cumhurbaskanligi-hukumet-sistemi-turkiyenin-savunma-yapilanmasinda-da-yeni-bir-donem-baslatti-2/>:

լուծությունը, ռազմաարդյունաբերության ազդեցությունը արտաքին քաղաքականության վրա¹:

«Ռազմական ու անվտանգության ոլորտի արդի վերաձևումները» թեմայի շրջանակում անդրադարձ է կատարվում հատկապես ԱԶԿ-ի կառավարման շրջանում անվտանգության ոլորտում տեղի ունեցած բարեփոխումներին, քաղաքական դաշտում զինվորականության դերակատարության թուլացման ուղղությամբ իրականացված քայլերին ու 2016 թ. ռազմական հեղաշրջման փորձից հետո այդ ոլորտում կատարված աննախադեպ կառուցվածքային, ինստիտուցիոնալ, իրավանորմատիվային վերակազմավորումներին, որոնք էականորեն վերափոխման ենթարկեցին անվտանգության ոլորտը²:

«Թուրքիայի արդի պաշտպանական և անվտանգային քաղաքականությունը» թեման ընդհանուր պատկերացում է տալիս, թե ինչ միտումներ են առկա այդ երկրի պաշտպանական քաղաքականության մեջ, ինչ առաջնահերթություններ են սահմանվում, անվտանգային քաղաքականությունն ինչ վերափոխումներ է կրում, որոնք են ժամանակակից Թուրքիայի անվտանգային մարտահրավերներն ու սպառնալիքները, ինչպիսին է դրանց դիմագրավման ուղղությամբ իրականացվող քաղաքականությունը և այլն³:

¹ Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի պաշտպանական համակարգի արդիականացումն ու անվտանգության ոլորտի բարեփոխումները, Ե., 2014; Wiśniewski Rafal, Military-Industrial aspects of Turkish defence policy, Rocznik Integracji Europejskiej, 2015, <https://pressto.amu.edu.pl/index.php/rie/article/view/6201>; İ. Ayşe, Özer A., The Rise of the Turkish Defense Industry, SETA Publications 44, 2019; Eceral Özelçi Tanyel, Türk Savunma ve Havacılık Sanayisinin Küresel, Ulusal ve Yerel Dinamikleri: Ankara Örneği, Akademik Bakış, Cilt 11, Sayı 21, Kış, 2017, <http://www.gaziakademikbakis.com/.../gab/art.../download/444/312>; Bağcı Hüseyin, Kurç Çağlar, Turkey's strategic choice: buy or make weapons?, Defense Studies, Vol.17, Issue 1, 2017; Kurç Çağlar, Between defence autarky and dependency: the dynamics of Turkish defence industrialization, Defense Studies, Vol. 17, Issue 3, 2017; Savunma Sanayii Yıllık Faaliyet Raporu 2018, SSB, https://www.ssb.gov.tr/Images/Uploads/MyContents/V_20190301162621711649.pdf; Gursoy Yaprak, Turkish Defence Policies and Armed Forces: Continuities and Changes after the Cold War, Aston University, 2016; Balcı Ali, Çelik Cahit, Turkey's Military Power In The 2000s: An Assessment for Measurement Methods, Turkish Policy Quarterly, vol. 18, N 2, 2019, <http://turkishpolicy.com/article/973/turkeys-military-power-in-the-2000s-an-assessment-for-measurement-methods>; Anouck Gabriella Côté Réal-Pinto, A Neo-Liberal Exception? The DefenceIndustry 'Turkification' Project, Development as a Battlefield, No.8, 2017, <https://journals.openedition.org/poldev/2316>

² Տե՛ս Keyman Fuat, Gürcan Metin, 15 Temmuz'dan On Beş Ay Sonra: Ordunun Reformu, Devletin Dönüşümü, Kasım 2017, http://ipc.sabanciuniv.edu/.../15-Temmuzdan-15-Ay-Sonra_Keyma...; Mevlutoğlu Arda, Türkiye'nin Savunma Reformu, Tespit ve Oneriler, SETA Analiz, Ağustos 2016, https://setav.org/.../20160901200637_turkiyenin-savunma-refor...; Ramazan Erdağ, After the Failed Military Coup: The Need for the Organizational Reform in the Turkish Military, All Azimuth V.8, N.1, 29 May 2018, 55-68, http://www.allazimuth.com/wp-content/uploads/2018/12/4-Erdag_After-Failed-Coup.pdf. Cumhurbaşkanlığı Hükümet Sistemi, Türkiye'nin Savunma Yapılanmasında da Yeni Bir Dönem Başlattı, <http://www.milscint.com/tr/cumhurbaskanligi-hukumet-sistemi-turkiyenin-savunma-yapilanmasinda-da-yeni-bir-donem-baslatti-2/>:

³ Տե՛ս Lesser Ian, The Evolution of Turkish National Security Strategy, Turkey's Engagement with Modernity, Conflict and Change in the Twentieth Century, ed. C. Kerslake, K. Oktem, P. Robins, Palgrave Macmillan 2010, pp. 258-277; Mustafa Aydın, Fulya Ereker, "Türkiye'de Güvenlik: Algı, Politika, Yapı", Uluslararası İlişkiler, Cilt 11, Sayı 43 (Güz 2014), s. 127-156; İşte yeni güvenlik konseptinin ayrıntıları, <https://www.tgrthaber.com.tr/politika/iste-yeni-guvenlik-konseptinin-ayrintilari-148072>; Özcan Mesut, Türkiye'nin güvenlik meselesini anlamak, <https://www.aa.com.tr/tr/analiz-haber/turkiye-nin-guvenlik-meselesini-anlamak/1355691>; Is the '2.5 War Strategy' making a comeback?, <http://www.hurriyetdailynews.com/opinion/selin-nasi/is-the-2-5-war-strategy-making-a-comeback-127382>; Kasapoğlu C., Türkiye'nin yeni bölgesel savunma vizyonu, <https://aa.com.tr/tr/analiz-haber/turkiyenin-yeni-bolgesel-savunma-vizyonu/1023221>; Yıldırım Sami, Türkiye'nin yeni savunma stratejisi sınır ötesi operasyonlarla şekilleniyor, <https://aa.com.tr/tr/analiz-haber/turkiyenin-yeni-savunma-stratejisi-sinir-otesi-operasyonlarla-sekilleniyor/1089593>; Cumhurbaşkanı Erdoğan: Yeni güvenlik anlayışı, Türkiye'nin Suriye ve Irak'ta için bulunduğu en açık ifadesi, <http://www.hurriyet.com.tr/cumhurbaskani-erdogan-yeni-guvenlik-anlayisi-40259655>; Bulut Gürpınar, "Milli Güvenlik Kurulu ve Dış Politika", Uluslararası İlişkiler, Cilt 10, Sayı 39 (Güz 2013), s. 73-104; Kazan Isil, Turkey: Where Geopolitics Still Matters, Contemporary Security Policy, 26:3, pp. 588-604; COL. Lynch Robert William, From 2002-2017, to What Extent Has Turkish Security Policy Been Effective?, School of Advanced Military Studies United States Army Command and General Staff College Fort Leavenworth, Kansas, 2017, pp. 13-54; Başbakan Yıldırım: 'TSK, modern savunma konseptine geçiyor', <http://www.turkiyegazetesi.com.tr/gundem/391004.aspx>; Yeşiltaş Murat, Türkiye'nin Yeni Savunma Konsepti, <http://m5dergi.com/2018/09/turkiyenin-yeni-savunma-konsepti/>

«Թուրքիայի ռազմական համագործակցության միտումները և շրջանակը» թեման պատկերացում է տալիս ուսանողին այդ երկրի ռազմական համագործակցության հիմնական ուղղությունների ու երկրների, դրանց ոլորտների վերաբերյալ: Առանձին կարևորություն է տրվում հատկապես Թուրքիայի և Ադրբեջանի ու Վրաստանի միջև ռազմական համագործակցության, ռուս-թուրքական զարգացող ռազմատեխնիկական համագործակցության խնդիրներին, տարածաշրջանային երկրներում թուրքական ռազմաբազաների տեղակայման քաղաքականությանը, ռազմաարդյունաբերության ոլորտում միջպետական համագործակցության տարբեր խնդիրներին և այլն¹:

Ակնկալվող վերջնարդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի մասնագիտական գիտելիքի և իմացության շնորհիվ ներկայացնել Թուրքիայի անվտանգային ու պաշտպանական համակարգն ու դրա առանձնահատկությունները, զինված ուժերի կառուցվածքն ու անվտանգության մարմինները, այդ ոլորտում փոխակերպումներն ու հիմնական միտումները, կյուրացնի ռազմական եզրութաբանությունը, թուրքերեն ռազմական տեքստերի ու բաց աղբյուրների հետ աշխատանքի առանձնահատկությունները: Գործնական մասնագիտական կարողությունների շրջանակում ուսանողը ձեռք կբերի Թուրքիայի անվտանգային և պաշտպանական քաղաքականության ոլորտում զարգացումներն ու արդի միտումները, ռազմաքաղաքական գործընթացները տարածաշրջանի ու Հայաստանի անվտանգության տեսանկյունից վերլուծելու և գնահատելու հմտություններ: Ռազմական և անվտանգության թեմաներով բաց աղբյուրների հետ աշխատանքն ու պարբերական մշտադիտարկումն ուսանողի մոտ կծնավորի մասնագիտական տեղեկատվա-վերլուծական աշխատանք իրականացնելու հմտություններ:

Այսպիսով ներկայացվող դասընթացը նպատակաուղղված է պաշտպանության և անվտանգության ոլորտի գերատեսչությունների համար մասնագետների (ռազմական թարգմանիչների ու վերլուծաբանների) պատրաստմանը, նրանց՝ համապատասխան գիտելիքների ու հմտությունների ձևավորմանը:

Левон Овсепян, ОСОБЕННОСТИ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ОБУЧЕНИЮ ПОЛИТИКИ В СФЕРЕ БЕЗОПАСНОСТИ И ОБОРОНЫ ТУРЦИИ. Комплексное изучение современной Турции имеет не только научное, но и практическое, образовательно-методологическое значение. В настоящее время в Турции происходят значительные военные и политические преобразования, которые повышают риски безопасности Армении. Изучение системы и политики Турции в области безопасности и обороны важно с точки зрения оценки и анализа перспектив и рисков безопасности Армении. Представленный курс нацелен на подготовку специалистов (военных переводчиков и аналитиков) для ведомств области обороны и безопасности, развития соответствующих знаний и навыков.

Ключевые слова: Турция, безопасность, оборона, вооруженные силы, курс, методология, активное обучение, мониторинг.

Levon Hovsepyan, THE SPECIFICS AND METHODOLOGY OF TEACHING TURKEY'S SECURITY AND DEFENSE POLICY. The study of modern Turkey has not only scientific but also practical and methodological importance. Nowadays, Turkey faces with tangible military and

¹ Տե՛ս «Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ռազմավարական գործընկերության ու փոխօգնության մասին» համաձայնագիրը; Kasapoğlu C., Türkiye-Azerbaycan: Savunma işbirliğinden askeri ittifaka, <https://aa.com.tr/tr/analiz-haber/turkiye-azerbaycan-savunma-is-birliginden-askeri-ittifaka/952323>. Давтян Э., Трехстороннее военное сотрудничество Турции, Грузии и Азербайджана (ноябрь 2012 г. - май 2016 г.), http://www.yusu.am/files/04E_Davtyan_r.pdf; Kasapoğlu C., Turkish-Russian Defense Cooperation: Political-Military Scope, Prospects And Limits, Foreign Policy & Security 2019/7, http://edam.org.tr/wp-content/uploads/2019/05/CAN_TURKISH-RUSSIAN-DEFENSE-COOPERATION_13-May%C4%B1s.pdf; «Russia and Turkey in the Black Sea and the South Caucasus», «Europe Report N°250», SIPRI report, 28 June 2018; Özgen Cenk, Türkiye'nin denizaşırı askeri üs kurma girişimleri: tespitler ve geleceğe yönelik öneriler, Güvenlik Bilimleri Dergisi, Cilt: 8 Sayı: 2, Kasım 2019; Hacaoglu Selcan, Mapping the Turkish Military's Expanding Footprint, <https://www.bloomberg.com/news/articles/2019-03-07/mapping-the-turkish-military-s-expanding-footprint-quicktake>.

political transformations, which increases the security risks for Armenia. The analysis of the security system and security and defense policy of Turkey is important from the perspectives of Armenia's security and risk assessment. This course is aimed at shaping new specialists (military translators and analysts) with specific knowledge and skills for the institutions of security and defense.

Keywords: Turkey, security, defense, armed forces, course, methodology, active learning, monitoring.